Վերին Բասեն

Վուսկոմի	7
Ճերայուն	10
Քաթարաղ	8
Ալի-Ճադրակ	5
Ալի-բաղրկեն	1
Քանդիրի	1
Դանիշման	2

Խնուս

Քուլլի	100
Ջաուրմախ	10

Եփրեմ Սեթի մի քանի տասնյակի հասնող նամականու մեջ մեր հանդիպեց Ախլցխայից գրված մի նամակ (1830 թվականի 27 օգոստոս ([8 սեպտեմբեր] թվակիր), որը իր բովանդակությամբ հիշեցնում էր Գ. Աղանյանցի վերոհիշյալ աշխատության հիմնական թեզերը։ Աղբյուրագիտական քննությունը ցույց տվեց, որ Գ. ք. Աղանյանցի ամբողջ աշխատությունը փաստորեն Եփրեմ վարդապետ Սեթյանի նամակի վերարտադրությունն է աշխարհաբար արևվելահայերենով և որ Աղանյանցի աշխատանքի հիմքում ընկած է վերոհիշյալ նամակը։

Թե ինչպես կարող էր Եփրեմ Սեթի կողմից իր աբբահորը ուղարկված նամակը հետագայում ընկնել Աղանյանցի ձեռքը, այնքան էլ պարզ չէ։ Այն չհայտնաբերվեց նաև Հայաստանի արխիվներում, ուր պահվում են Աղանյանցի թղթերը։ Ենթադրելի է, որ Աղանյանցը տեսել է նամակի ոչ թե բնագիրը, որ պահվում է Մխիթարյանների Դիվանում, այլ նրա մի արտագրությունը, որ կարող էր մնացած լինել անձամբ Սեթի մոտ և Ախլցխայում նրա մահից հետո կարող էր մյուս թղթերի հետ տեղափոխվել Թիֆլիս։ Ընդունելի ենք համարում նաև, որ Աղանյանցը կարող էր չիմանալ գրության հեղինակի ով լինելը, չնայած պարտավոր էր կռահել՝ քանի որ գրությունը գրում էր հայ կաթոլիկների առաջնորդը և առաջին դեմքով։

Ստորև տպագրում ենք հայր Եփրեմ Սեթի նամակի լրիվ տեքստը.

Մ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Աստուածապատիւ Հոգեւոր Տէր,

27 օգոստոս [8 սեպտեմբեր] 1830 թ. Ախլցխա

Ի կարգ անկեալ բանիւք նամակացս նախագրելոց, ծանուցի համառօտիւ զպատրաստութիւն ազգիս հայկազնոյ բնակելոյ ի նահանգս Կարնոյ եւ Կարսայ եւ Պայազիտոյ, եւ ի գաւառսն Ախլցխայ նուաճելիս անդրէն ընդ օսմանեան իշխանութեամբ չուել միաբան ուխիւք եւ ընտանեօք իւրեանց ի գաւառս իշխանութեան ռուսաց։

Ի հայկական պատմութեան համարեսցի այս գործ արժանի գեղեցիկ վիպասանութեան ընդ եղեգամբ քաջ պատմագրի, որոյ հանգոյն չերեւեցաւ կարծեմ ի դարս առաջինս, զի ամենեքին միակամ եւ միախորհուրդ հայք եւ ուղղափառք[7] գրեթէ մոռացեալ զընդաբոյս ոխերիմ թշնամութիւնն առ միմեանս[8], յանդիման նեղչաց իւրեանց պարծ եւ համարձակ ուղւոյ լինէին ընդ հովանեաւ թեւոց լիամագիլ Արծւոյն Ռուսաց։ Վասն որոյ կամիմ մանրապատում գրել առ յիշատակէ դարուց ապագայից, եւ ի ճաշակ լրասիրութեան օրագրաց Եւրոպայ, ոչ միայն իբրու ականատես եղելոցն, այլ եւ յիրս իրս գործաւար եւ եղելոցն առաջնորդ։ Մանաւանդ, զի Պօյաճեան Թովմա վ[արդապետն] խնդրէ ուսանել զորպէսն իրաց ի Սերոբէ վ[արդապետն] գրով

7 Իմա՝ հայ կաթոլիկներ։

8 Նկատի ունի հայ լուսավորչականների և հայ կաթոլիկների միջև եղած վեճերը։